ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 մայիսի 2023 թվականի N 723 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 20-Ի N 248-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունվարի 20-ի «Մաքսային փորձաքննության համար մասնագետների և փորձագետների ծառայությունների դիմաց Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներից վարձատրության իրականացման կարգը սահմանելու մասին» N 248-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) որոշման նախաբանում «Հայաստանի Հանրապետության օրենքի 141-րդ հոդվածի 3-րդ մասին» բառերը փոխարինել «օրենքի 237-րդ հոդվածի 4-րդ մասին» բառերով.

2) որոշմամբ սահմանված հավելվածի (այսուհետ՝ հավելված) 1-ին կետում «Մաքսային միության մաքսային օրենսգրքի մասին» պայմանագրի 138-րդ հոդվածին» բառերը փոխարինել «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» 2017 թվականի ապրիլի 11-ի պայմանագրի N 1 հավելվածով

հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 389-րդ հոդվածին» բառերով.

3) հավելվածի 2-րդ կետում «այն մաքսային մարմնի կողմից, որի նախաձեռնությամբ նշված անձինք ներգրավվել են մաքսային փորձաքննությանը» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից (այսուհետ՝ կոմիտե)» բառերով.

4) հավելվածի 3-րդ կետում «մաքսային մարմնի ղեկավարի անունով» բառերը փոխարինել «կոմիտե» բառով.

5) հավելվածի 5-րդ կետի 1-ին նախադասության մեջ «մաքսային մարմնի» բառերը փոխարինել «կոմիտեի» բառով, իսկ 2-րդ նախադասությունը հանել.

6) հավելվածի 6-րդ կետում «Մաքսային մարմինը» բառերը փոխարինել «Կոմիտեն» բառով, իսկ «հոդվածով ամրագրված դեպքերի» բառերից հետո լրացնել «՝ մերժման հիմքերի մասին սույն կարգի 5-րդ կետում նշված ժամկետում տեղեկացնելով դիմումատուին» բառերով.

7) հավելվածի 7-րդ կետում «մաքսային մարմնի կողմից իրականացվում է մաքսային մարմնի կողմից մաքսային փորձաքննության համար մասնագետների և փորձագետների ծառայությունների դիմաց վարձատրության (կատարված ծախսերի փոխհատուցման) մասին որոշումն ընդունելուց» բառերը փոխարինել «իրականացվում է սույն կարգի 5-րդ կետով նախատեսված ժամկետում դիմումի ուսումնասիրությունից» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

12.05.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ